նեաց անդ. յորմէ ազգն Բզնունեաց 'ի գաւառն Վանայ:

Արամայիս՝ որդի Արմենակայ՝ շինեաց տուն յեզր գետուն Երազու, և յանուն իւր կոչեաց զնա՝ Արմաւիր, և զգետն կոչեաց յանուն Թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ: Եւ զորդին իւր զՇարայ շատակեր և յոլովածին առաքէ 'ի հիւսիս 'ի դաշտ մի արգաւանդ, բնակել անդ. յորոյ անունն կոչեցաւ երկիրն՝ Շիրակվան (կամ) Շիրակավան, այսինքն՝ Շիրակաւան, և լցաւ աշխարհն մարդկամբ:

Ամասիա՝ որդի Արամայիսայ. սա բնակի յԱրմաւիր: Սա շինեաց Բ. տուն՝ մերձ 'ի լեառն Հարաւոյ, և ետ երկու որդւոցն՝ Փառոխայ և Ցոլակայ կայտառին, և կոչեաց զանուն նոցա՝ Փարախոտ և Ցոլակերտ: Եւ զլեառն կոչեաց յանուն իւր՝ Մասիս:

Գեղամ՝ որդի Ամասիայի՝ այր և կայտառ: Սա ծնաւ զՀարմայ: Սա շինեաց բդ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան